ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/7 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2023 թվականի կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 17.10.2022թ. N 489/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 02.11.2022թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սարգսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ն.Այդինովան, Մ.Աթոյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման 1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Սարգսյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/7 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «ՄԱՏԵՆԱԳԻՐ» ՍՊԸ (ք.Երևան, Սեբաստիա-30ա, բն.39)
2" «ՀՐԱՆՈՒՇ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԱՇԻԿԻ» ԱՁ-ն (ք.Երևան, Նորք Մարաշ, Նորք-2փ., 1)
3" «Ռոման Սողոմոնյան Ռաֆիկի» ԱՁ-ն
4. «ՎՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ (ք.Ստեփանավան, Գ.Նժդեհի-37)
5. ԱՁ «Կարինե Բախշինյան» (ք.Ստեփանավան, Գ.Նժդեհի-3/5)
6" ԱՁ «Սարգիս Ալոյան Մանվելի» (ք.Արթիկ, Իսահակյան-34)

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Չ/Հ	Մասնակիցների անվանումները	Ծառայության անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			Պլանավորված առավելագույն ընդհանուր գինը ՀՀ դրամ
				ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	«ՄԱՏԵՆԱԳԻՐ» ՍՊԸ	Արխիվացման ծառայություններ	8 910 000	0%	8 910 000	**9 500 000**
2		«ՀՐԱՆՈՒՇ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԱՇԻԿԻ» ԱՁ		9 000 000	0%	9 000 000	
3		«Ռոման Սողոմոնյան Ռաֆիկի» ԱՁ		9 400 000	0%	9 400 000	
4		«ՎՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ		9 444 500	0%	9 444 500	
5		ԱՁ «Կարինե Բախշինյան»		9 500 000	0%	9 500 000	
6		ԱՁ «Սարգիս Ալոյան Մանվելի»		9 500 000	0%	9 500 000	

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4" ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/7 ծածկագրով գնման ընթացակարգի հետագա ընթացքի վերաբերյալ

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Սարգսյանը տեղեկացրեց, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը 02.11.2022թ. թիվ-03/26-1/19095-2022 գրությամբ (կցվում է), հայտնում է, որ 01/11/2022թ. ժամը 09:32-ից մինչև ժամը 10:26-ն էլեկտրոնային աճուրդների համակարգը աշխատել է խափանումներով, ինչի արդյունքում խոչընդոտվել է ինչպես ժամը 09:30-ից մինչև ժամը 10:30-ն անցկացվելիք աճուրդների, այնպես էլ նշված ժամանակահատվածում հրավերներով հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանված ընթացակարգերին մասնակցության հայտերի ներկայացման բնականոն ընթացքը (խափանված չափաբաժինների և ընթացակարգերի ցանկը կցվում է): Միաժամանակ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնում է, որ ՀՀ կառավարության 02/05/2019թ. N 516-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված գնման ընթացակարգը (տվյալ չափաբաժինը) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգը խափանված է:

5" Հանձնաժողովը որոշեց՝

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/7 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սարգսյան

Անդամներ՝ Ն.Այդինովա

Մ.Աթոյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան